ՀՀ ԿԳՄՍՆ «Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա- Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

Դպրոց-<< ՀՀ Վայոց ձորի Զառիթափի միջնակարգ դպրոց>> -ՊՈԱԿ

Ուսուցիչ- Ռիմա Սուքոյան

Ղեկավար- Կիմա Օհանեսյան

Անցկացման վայրը՝ ք.Վայք

Վայք 2023

Բովանդակություն

1.Ներածություն----------3

2. Հետազոտության խնդիրը և նպատակը ---------- 4

3.Ուսուցչի համագործակցությունը սովորողի ծնողի հետ որպես սովորողի առաջադիմության ու զարգացման

նախապայման----------4

4.Ընտանեկան դաստիարակության ազդեցությունը սովորողների վարքի ու առաջադիմության վրա----------6

5.Դպրոց-ընտանիք համագործակցություն----------10

6.Ծնողական ժողովների կարևորությունը սովորողների կրթության ու դաստիարակության համատեքստում----------12

7.Եզրակացություն----------15

8.Ամփոփում----------15

9.Օգտագործված գրականության ցանկ----------16

Ներածություն

Մեր երեխաները՝ մեր ծերությունն են:

Ճիշտ դաստիարակությունը՝մեր երջանիկ ծերությունն է:

Վատ դաստիարակությունը՝մեր ապագա

դժբախտությունն է,մեր արցունքները,մեր մեղքը

ուրիշ մարդկանց և հայրենիքի առջև:

Ա.Ս.Մակարենկո

Ընտանիքը սիրով և հավատքով ստեղծված սուրբ միություն է:Մենք այդ ընտանիքը՝որպես Աստծո բարիք,ստանում ենք մեր ծնողներից:Իսկ երեխան ոչ ընտրել գիտի,ոչ էլ որոշել:

Հայրն ու մայրն են կերտում նրա ճակատագիրը,և նա,չկարողանալով շեղվել կամ փոխել այդ ճակատագիրը,ստիպված ընդունում է այն և տանում ողր կյանքի ընթացքում:

Ընտանիքը մարդկային կուլտուրայի հիմքն է:Ընտանիքում երեխան սովորում է սիրել,հավատալ,ձևավորվում են բնավորության հիմնական գծերը:Զուր չի ասել գերմանացի աստվածաբան Թոլուկը,որ աշխարհը կառավարվում է մանկասալյակից:Նշանակում է՝ընտանիքը մարդկային ճակատագրի փորձասենյակ է,միայն մի տարբերությամբ,որ փորձասենյակում գիտեն՝ինչից ինչ են ստանում,իսկ ընտանիքում պարզապես ծնվում է երեխան ու մեծանում է ընտանեկան ավանդույթների ու պահանջներին համապատասխան:

Մեծանուն հայ գրող Մուրացանը գրել է.<<Զորավոր է այն ազգը,որ ունի զորավոր ընտանիքը>>:Ի՞նչ է զորավոր ընտանիքը:Այն սիրով և երջանկությամբ ողողված ընտանիքն է,ուր մարդն իրեն զգում է անփոխարինելի:

Կարևորելով ընտանիքի դերը երեխաների դաստիարակության գործում՝ մեծ է նաև դպրոցի դերը այդ հարցում:Այն սերմերը,որոնք ցանվել են ծնողների կողմից,կարող են հավասարապես ոչնչանալ կամ բողբոջել դպրոցում՝դասղեկի,ուսուցիչների շնորհիվ:Ուստի պետք է իրականացնել համագործակցություն ուսուցչի ,սովորողի

ընտանիքի հետ:Այսօր ավելի արդիական և պահանջված է այդ համագործակցությունը՝ ուղղված սովորողի կրթական կարիքների ու պահանջմունքների վերլուծությանն ու բարելավմանը:

Հետազոտության խնդիրը

Հետազոտության համար որպես խնդիր ենք սահմանել ծնող-ուսուցիչ համագործակցության՝կրթության որակի վրա ունեցող բացառապես դրական ազդեցության կարևորումը:

Հետազոտության նպատակը

Սույն հետազոտական աշխատանքի հիմնական նպատակն է նշել բոլոր այն եղանակներն ու միջոցները,որոնք թույլ կտան ամրապնդել դպրոց-ծնող համագործակցությունը՝նպատակ ունենալով նպաստել սովորողի ուսումնառության որակի բարձրացմանը:

Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների հետ որպես սովորողի առաջադիմության և զարգացման նախապայման

Դպրոցն ու ընտանիքը համարվում են սովորողի դաստիարակության գործին նպաստող գլխավոր օղակները:Պետք է վարպետորեն միացնել այդ երկու օղակները,օգնել ծնողներին:Նրանք էլ իրենց հերթին օժանդակեն դպրոցի ստանձնած պատասխանատու և դժվարին գործին:Պարզ է , որ դաստիարակության գործը ամենաբարդ և պատասխանատու գործերից մեկն է և պահանջում է համագործակցություն:

Ինչո՞ւ է կարևոր ծնող-դպրոց համագործակցությունը:

Քանի որ դպրոցը և ծնողը ունեն միասնական ,իսկ միասնական լավագույն միջոցը համագործակցությունն է:

Երեխան դպրոցում ունի այլ դրսևորում,վարք,իսկ տանը՝այլ դրսևորում:Երեխայի շահերը ներկայացնելու և լավագույնս պաշտպանելու միջոց է՝ տեղեկացված լինելը:Ծնողը ամբողջական պատկեր է ունենում իր երեխայի մասին:Միայն

համագործակցության միջոցով կարող ենք յուրաքանչյուր սովորողի տալ իր կարիքներին համապատասխան կրթություն և դաստիարակություն:

Ծնող-դպրոց համագործակցությունը նաև դպրոցի զարգացման նախապայմանն է:Ակտիվ ծնողը մեզ համար դառնում է գործընկեր:Նրա առաջարկությունները,մտահոգությունները թույլ են տալիս ,որ դպրոցը զարգանա,չլճանա:

Համագործակցել նշանակում է ծնողների ներգրավվածություն:

Ի՞նչ է նշանակում ծնողների ներգրավվածություն:

Ծնողը ոչ թե պետք է միջամտի ուսուցչի աշխատանքին,այլ վեր հանի խնդիրները:Ծնողը պետք է միասնական և անընդմեջ պատասխանատվություն կրի երեխայի ուսման բարելավման համար ինչպես տանը,այնպես էլ դպրոցում:Ներգրավված լինելը միավորում է ծնողներին և ուսուցիչներին,որպեսզի նրանք միահամուռ ուժերով նպաստեն աշակերտների ակադեմիական առաջադիմության բարելավմանը և դաստիարակությանը:

Երբ ծնողը ներգրավված է իր երեխայի կրթության գործընթացում.

Երեխան ունի ավելի բարձր ակադեմիական առաջադիմություն,քննությունների լավ արդյունքներ:Աշակերտի մոտ զարգանում են սոցիալական հմտություններ,վարքը դառնում է դրական թե՛ տանը,թե՛ դպրոցում:

Պետք է և՛ ուսուցիչը,և՛ ծնողը ունենան իրար մոտ պատկերացումներ և արժեքային համակարգ:

Օրինակ՝ դպրոցում ասում ենք ,որ բոլոր կոնֆլիկտները չեն լուծում ուժի միջոցով,այլ լուծում են խոսքով,իսկ տանը բոլորովին հակառակն են ասում:

Կան տարբեր միջոցներ ծնողների հետ առավել արդյունավետ համագործակցելու:Նախ և առաջ ծնողը պետք է լինի տեղեկացված,որի համար կան տարբեր միջոցներ.

- ✓ Դպրոցի կայքէջ
- ✓ Դպրոցի էջեր բաց և փակ սոցիալական տարբեր հարթակներում
- ✓ Էլեկտրոնային հասցեների առկայություն:

Կան ծնողի հետ համագործակցելու մի քանի ձևեր.

- ✓ Ծնողական ժողովներ
- ✓ Հանդիպում-քննարկումներ
- ✓ Առցանց հանդիպումներ

- ✓ Էլեկտրոնային օրագիր
- ✓ Էլեկտրոնային հաղորդագրություն,նամակագրություն
- ✓ Հեռախոսազանգ

Ծնողի հետ համագործակցելու կարևոր նպատակներից է.

- ✓ Գտնել ընտանիքում այն հնարավորությունները,որոնք դրական կազդեն սովորողի վրա
- ✓ Բարձրացնել ծնողների մանկավարժական կուլտուրան
- ✓ Ներգրավել նրանց ուսումնադաստիարակչական պրոցեսին:

Առաջանում են որոշակի դժվարություններ ծնողներին ներգրավելու հետ կապված,հատկապես դա տեղի է ունենում առաջին դասարանում և 5-րդ դասարանում երբ ուսուցիչը անծանոթ է աշակերտին և ծնողին:Կամ ծնողները զբաղված են աշխատանքով և քիչ են ներգրավվում:Այստեղ շատ կարևոր է ուսուցչի դերը:Ուսուցիչը պետք է այնքան ճկունություն և հմտություն դրսևորի,որ կարողանա յուրաքանչյուր ծնողին դարձնել իր գործընկերը,համախոհը:

Ընտանեկան դաստիարակության ազդեցությունը սովորողների վարքի ու առաջադիմության վրա

Երեխան ընտանիքի հայելին է:

Ժողովրդական ասացվածք

Ընտանիքը փոքրիկ հասարակություն է,որը կենտրոնական դիրք է գրավում երեխայի դաստիարակության գործում,կարևոր դեր է խաղում նրա աշխարհայացքի և վարքի բարոյական նորմերի ձևավորման մեջ:

Ընտանիքը դպրոցական կոլեկտիվի հիմնասյունն է :
Ընտանիքի և դպրոցի մանկավարժական փոխհարաբերությունները կայանում են սովորողի անհատական զարգացման և աճի ձևավորման համար բարենպաստ պայմանների ստեղծմանը,մարդու ակտիվ կյանքի կազմակերպմանը և վերջապես

արժանապատիվ կյանք վարելու ձգտմանը:Ծնողների հետ համագործակցության ընթացքում ուսուցչի հիմնական խնդիրն է ակտիվացնել ընտանիքի մանկավարժական ,դաստիարակչական գործունեությունը:

Ուսումնադաստիարակչական գործընթացի բոլոր մասնակիցների փոխհարաբերությունները,կյանքից վերցրած բոլոր օրինակները և հոգևոր արժեքները նպաստում են անհատականության ձևավորմանն ու զարգացմանը:

Դպրոցի և ընտանիքի փախհարաբերությունները պետք է հենված լինեն փոխադարձ վստահության վրա,այդ պատճառով էլ ուսուցիչը պետք է գործի՝հաշվի առնելով,թե ում հետ է ապրում երեխան,ինչ պայմաններում,ընտանիքի սոցիալական կարգավիճակը և այլն:

Դպրոցի և ընտանիքի համագործակցության հիմնական պայմանը միմյանց գործառույթների բովանդակության մասին տեղեկացված լինելն է,որպեսզի այս սուբյեկտները կարողանան հասկանալ միմյանց և պատկերացնեն դաստիարակության հիմնական ձևերը,կարողանան հաստատել փոխօգնության իրական գործողություններ,հստակ պատկերացնեն դաստիարակության խնդիրները,միջոցներն ու վերջնարդյունքները:

Դպրոցի աշխատանքը ծնողների հետ իրականացվում է տարբեր ուղղություններով՝ողջ ծնողական կոլեկտիվի,խմբով կամ անհատական և այլն:

Դաստիարակության գործընթացում ընտանիքի և դպրոցի համագործակցությունը անհրաժեշտ է այն պատճառով,որ ծնողները ցանկանում են իրենց երեխաներին տեսնել որպես հասարակության արժանապատիվ քաղաքացիներ:

Առանց ընտանիքի օգնության դպրոցը չի կարող ապարովել դաստիարակության բարձր աստիճան:Եթե դասղեկի և ծնողների մեջ կան վստահելի փոխհարաբերություններ,ապա նա կարող է ծնողին խնդրել կիսվել իր դիտարկումներով ու դաստիարակչական հիմնախնդիրներով:Այս ամենով ապահովվում է դպրոցի,ընտանիքի ու դասարանական կոլեկտիվի պահանջների միասնությունը:

Ուսուցիչները հենվում են ընտանեկան դաստիարակության դրական փորձի վրա՝օգտագործելով այն դաստիարակչական գործընթացում,որի միջոցով ուժեղանում են դրական գործընթացներն ու շարժառիթները,դանդաղեցվում են բացասական երևույթները:

Սովորողների համար ընտանիքը ոչ միայն բնակության վայր է,այլև դաստիարակության միջավայր:Ընտանիքի ազդեցությունը շատ ավելի արժեքավոր է երեխաների կյանքի սկզբնական շրջանում և գերակայում են դաստիարակչական այլ ազդեցություններին:Որքան լավն է ընտանիքը,այն այնքան լավ է ազդում սովորողների դաստիարակության վրա,և հետևաբար բարձր է նրա ֆիզիկական, բարոյական,աշխատանքային դաստիարակության մակարդակը անհատի ձևավորման գործում:

Հաշվի առնելով բացառությունները՝կարող ենք ասել,որ ընտանիքի և նրանում դաստիարակվող անձի փոխկապվածությունը հաստատուն է:Քանի որ ընտանիքի ազդեցությունը անձի ձևավորման վրա շատ կարևոր է,ուստի պետությունն ու հասարակությունը պետք է մեծ ուշադրություն դարձնեն ընտանիքներում ապագա քաղաքացու ճիշտ դաստիարակության կազմակերպման հարցերին:Ընտանիքը ընկած է անձի ճիշտ դաստիարակության կազմակերպման հիմքում:Այն անձնային որակները,որոնք ձևավորվում են լիարժեք ընտանիքում,բացակայում են որբ երեխաների մոտ:

Ընտանեկան դաստիարակությունից զուրկ սովորողների վերաբերյալ մեծ հոգածություն է ցուցաբերում պետությունը՝ստեղծելով բազմաթիվ հաստատություններ,որոնք հնարավորինս փոխարինում են ընտանեկան միջավայրին:

Կարելի է եզրակացնել,որ սովորողների դաստիարակությունը իրականացվում է ընտանիքի, դպրոցի, հասարակության և պետության համատեղ ջանքերով և ընտանիքի դերը երեխայի դաստիարակության գործում շատ մեծ է ու անժխտելի:Ընտանիքի ազդեցությունը սովորողների դաստիարակության զարգացման և ձևավորման վրա անփոխարինելի է, որովհետև յուրաքանչյուր խելամիտ ծնող ավելի լավ է ճանաչում իր երեխաներին, գիտի նրանց առանձնահատկությունները,անհատականությունները,քան որևէ ուսուցիչ կամ դաստիարակ:

Ընտանիքում երեխայի ճիշտ դաստիարակության առաջին պայմանն ընտանեկան կոլեկտիվի ձևավորումն ու զարգացումն է ,նրա անդամների մեջ պարտքի և պատասխանատվության զարգացման, ամուր կարգապահության ստեղծումն ու ամրապնդումը:

Ընտանեկան դաստիարակության երկրորդ կարևոր պայմանը չափավորությունն է ամեն ինչում:Ոմանք <<երես են տալիս>> իրենց երեխաներին,բավարարում նրանց բոլոր պահանջներն ու քմահաճույքները և այդ կերպ հեռու են պահում իրենց զավակներին աշխատանքից ու աշխատելու պարտականություններից:

Նման ընտանիքներում երեխաները չեն կատարում նույնիսկ առտնին պարզ աշխատանքներ ու մեծանում են որպես հասարակության փափկակյաց և եսամոլ անդամներ:Նրանց մեջ ծլարձակում են ծուլության և կամակոր պահանջկոտության վտանգավոր սերմեր:Այս ամենն ի վերջո անդրադառնում է նաև ուսումնական աշխատանքի որակի վրա:Նրանք վատ են սովորում, չեն կատարում տնային առաջադրանքները:

Հաճախ ընտանեկան դաստիարակության մեջ թույլ է տրվում մեկ ուրիշ ծայրահեղություն՝չափից ավելի խստություն երեխաների նկատմամբ,նրանց ինքնուրույնության ճնշում:

Սովորողների դաստիարակության երրորդ կարևոր պայմանը ծնողների սկզբունքային կայունությունն է:Պետք է միշտ հիշել,որ անսկզբունք,անվճռական մարդը միշտ կմնա

իր երեխաների ծառան,դաստիարակության մեջ ոչ մի հաջողության չի հասնի,իսկ ծնողների սկզբունքայնությունը,վճռականությունը,օբյեկտիվությունը երեխաներին ճիշտ դաստիարակելու կարևոր երաշխիքներից է:

Սովորողների դաստիարակության չորրորդ կարևոր պայմանը երեխաների հայրենասիրական,հումանիստական,կոլեկտիվ աշխատանքներին պատրաստ լինելու ձևավորումն ու դաստիարակումն է:

Ընտանեկան դաստիարակություն կազմակերպելիս ծնողները միշտ պետք է հիշեն.

1. Ընտանիքում երեխայի դաստիարակությամբ պետք է զբաղվեն թե՛ մայրը,թե՛ հայրը՝սխալ այն կարծիքը ,թե դաստիարակության գործը միայն մոր պարտականությունն է,իսկ հայր ծնողի պարտականությունն է ապահովել ընտանիքի սոցիալ-տնտեսական բարեկեցությունը:

Հայրը նույնպես պետք է իր ազդեցությունն ունենա երեխաների՝հատկապես տղա երեխաների դաստիարակության գործին՝ հանդիսանալով նրանց համար առնականության չափանիշ:

2. Ծնողների խոսքը միշտ պետք է համապատասխանի գործին:Հայրը դժվար թե կարողանա արգելել որդուն ծխել կամ ալկոհոլ օգտագործել՝ասելով՝դա վնասակար է առողջությանը,եթե հենց ինքն էլ ծխում է կամ ալկոհոլ օգտագործում:

3. Ընտանեկան դաստիարակությունը կազմակերպելիս ծնողների պահանջները յուրաքանչյուր երեխայի համար պետք է նույնը լինեն և համապատասխան տարիքին ու սեռին:Պետք է օգնել մեծահասակներին,լինի աղջիկ թե տղա:Բայց աղջիկը պետք է օգնի հատկապես կանացի տնային գործերում,իսկ տղան՝հատկապես ծանր աշխատանքների դեպքում:

4. Ընտանիքի մեծահասակների պահանջները պետք է նույնը լինեն երեխայի նկատմամբ:Տատիկները,պապիկները հաճախ երես են տալիս երեխաներին,որի արդյունքում ունենում են անպատասխանատու,շփացած անձիք,որոնք դառնում են պատուհաս և ընտանիքի և դպրոցի համար:

Ընտանիքը որպես կոլեկտիվ դիտարկվում է ինչպես հասարակության առաջնային օղակ և իր բնույթով շատ բազմազան է:

Սովորողների համատեղ դաստիարակության հարցում դպրոցը միշտ պետք է հաշվի առնի յուրաքանչյուր ընտանիքի կառուցվածքային առանձնահատկությունները:

Այսօր լուրջ խնդիրներ ունենք ընտանեկան դաստիարակության բնագավառում:Գաղտնիք չէ, որ շատ ծնողներ երեխաների դաստիարակության գործում հանդիպում են լուրջ դժվարությունների և չկարողանալով հաղթահարել,դրանք,թույլ են տալիս լուրջ սխալներ:

Ընտանեկան դաստիարակության բազմաթիվ անհաջողություններ բացատրվում են ծնողների անբավարար մանկավարժական գրագիտության և անհրաժեշտ փորձի բացակայությամբ:

Ուսուցչի խնդիրն է օգնել ծնողներին՝գտնելու երեխաների հետ հաղորդակցվելու հարմար եղանակներ:Անվանի մանկավարժներից մեկն ասել է,որ ընտանիքում երեխաների դաստիարակությունը միաժամանակ ծնողների դաստիարակությունն է:

Երեխաների դաստիարակման որակի վրա բացասական ազդեցություն են ունենում ծնողների զբաղվածությունը,ներքին բախումներն ընտանիքում ոչ լիարժեք ընտանիքների թվի աճը,տարատեսակ աղանդների տարածումը,երեխաների ուսումնական ծանրաբեռնվածությունը և ժամանակի անտեսումը,արտադպրոցական հաստատությունների ՝բնակավայրից հեռու լինելը,ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների գայթակղությունները:

Այսօր ՏՏ ամբողջությամբ փոխարինել է երեխաների գործունեության գրեթե բոլոր տարածքներին:Համարյա մոռացվել են բակային խաղերը,անգամ դպրոցի ճամփան է կարճացել,որովհետև նույնիսկ գյուղում ծնողներն իրենց երեխաներին մեքենայով են հասցնում դպրոց:

Այսպիսով՝ ժամանակակից հայ ընտանիքի առջև ծառացած բազմաթիվ խնդիրներ լուրջ մարտահրավերներ են ներկայացնում սովորողների դաստիարակությանը:

Դպրոց –ընտանիք համագործակցություն

Արդյունավետ ուսումնական գործընթաց կազմակերպելու համար պետք է համագործակցեն ծնողը,ուսուցիչը և սովորողը:

Դպրոց-ընտանիք համագործակցությունը երկարատև աշխատանք է,որը պետք է կազմակերպվի պլանավորված ձևով:

Դպրոց-ընտանիքի համագործակցային հարաբերությունների ձևավորումն պայմանավորված է այն հանգամանքով,թե այդ գործընթացում ուսուցչի և ծնողի միջև ինչպիսի փոխհարաբերություններ են հաստատվում:Չէ որ ծնողը ու ուսուցիչը երեխաների դաստիարակներն են:Ուստի դաստիարակությունն արդյունավետ կդառնա նրանց համագործակցության պայմաններում:

Դպրոց-ընտանիք համագործակցությունը ենթադրում է նաև սովորողին ներկայացվող միասնական պահանջների,զարգացման ծրագրերի ու մեթոդիկաների մշակում:

Ուսուցչի և ծնողի համագործակցության բնույթը պայմանավորված է դպրոցի նկատմամբ ծնողների վերաբերմունքով,ինչպես նաև թե վերջիններս,ըստ իրենց դիրքորոշումների,որտեղ են իրենց տեսնում դաստիարակության գործընթացում:Այդ պատճառով էլ ծնողի հետ աշխատանք պետք է կառուցել տարբերակված,հաշվի առնելով ծնողների պահանջմունքները,ընտանեկան դաստիարակության առանձնահատկությունները,ծնողներին աստիճանաբար ներգրավել դպրոցի,դասարանի և իր երեխայի գործերում:

Դպրոց –ընտանիք համագործակցության հիմքը խմբային և անհատական աշխատանքի ձևերն են:Կան խնդիրներ,որոնք մտահոգում են ծնողներին կամ էլ կապված են դասարանում սովորողների դաստիարակության գործընթացի հետ:

Ուսուցիչ-ծնող համագործակցության ակտիվ մեթոդներ կարող են լինել փորձի փոխանակման սեմինարները,ուսուցիչների,հոգեբանի,սոցիալական աշխատողի հետ հանդիպումը:Վերջիններս կարող են օգնել՝որոշելու ծնողների հետ համագործակցության նպատակը:

Դպրոցում ծնողների խորհրդատվության կազմակերրպումն ունի իր առանձնահատկությունները:Այն խիստ անհատական է:Քանի որ ծնողները զբաղված են,աշխատում են ,ուստի խիստ կարևոր է , որ խորհրդատվությունը կազմակերպվի ծնողներին հարմար ժամերի:

Ծնողը պատասխանատվություն է կրում դպրոցահասակ իր երեխայի կրթության համար ,իսկ դպրոցը պարտավոր է իրականացնել կրթական գործընթացը:Հետևաբար երեխան և՛ ընտանիքում,և՛ դպրոցում պիտի ստանան միասնական ,ներդաշնակ դաստիարակություն և կրթություն:

Մեր երկրում այսօր բազմազան են դպրոցի առջև ծառացած խնդիրները,որոնք վերաբերում են մասնավորապես դպրոց-ծնող փոխհարաբերություններին:

Այդ ոլորտի անհամաձայնությունները խոչընդոտում են դպրոցի կրթադաստիարակչական գործընթացին:

Ընտանիքի դաստիարակչական ներուժը նվազել է մի շարք գործոնների ազդեցության պատճառով:Անհրաժեշտ է օգնել երեխաներին և այնպես անել,որ սոցիալական վիճակում գտնվող երեխաները խտրականության զոհ չդառնան:

Լինում են դեպքեր,երբ ավելի դժվար է աշխատել ծնողի,քան աշակերտի հետ:Թևավոր խոսքի արժեք է ստացել<< Երեխաների հետ աշխատելիս ամենադժվարը մեծերի հետ աշխատելն է >> միտքը:Ուսուցիչը պետք է տեղյակ լինի աշակերտի ընտանեկան հարաբերությունների մասին:Հատկապես նրանք պետք է լինեն ուշադրության կենտրոնում,որոնց ծնողները միայնակ են,հաշմանդամ,գործազուրկ կամ բռնի տեղահանված Արցախից:Կա ևս մի նրբություն ուսուցչի աշխատանքում:Ծնողների հետ

շփվելիս ուսուցիչը գնահատելով ու բնութագրելով աշակերտի լավ ու վատ կողմերը պետք է պահպանի չափի զգացողություն:

Ուսուցիչը և ծնողը համագործակցության հիմքում պետք է դրված լինեն հետևյալ սկզբունքները.

- ✓ Փոխադարձ հարգանք
- ✓ Առողջ բարոյահոգեբանական միջավայր
- ✓ Բանակցելու ,ելքեր գտնելու կարողություն
- ✓ Մշտադիտարկում
- ✓ Սխալների ընդունում ,վերլուծություն
- ✓ Ինքնաանդրադարձ կատարելու կարողություն
- ✓ Մարդասիրական մղումներ
- ✓ Սեփական շահի ստորադասում
- ✓ Անձնային բարձր որակների դրսևորում

Ուսուցիչը և ծնողը համատեղ ջանքերով կարող են հասնել սովորողի կրթության և դաստիարակության որակի բարձրացմանը:

Ծնողական ժողովների կարևորությունը կրթության և դաստիարակության համատեքստում

Ծնողների հետ առավել արդյունավետ համագործակցելու առավել տարածված ձևերից են ծնողական ժողովները:Դպրոցում ծնողների հետ ուսուցչի հանդիպումները թույլ են տալիս համատեղ ջանքերով վճռել դաստիարակության և ուսման բարդ հարցեր: Ծնողական ժողովները բաժանվում են երեք խմբի.

1. Համայնքային

Համայնքային ծնողական ժողովները հիմնականում կազմակերպում են տնօրինությունը և դրանք նրա համար են,որ ծնողների հետ քննարկենք դպրոցի ռազմավարական հարցերը:Այս ժողովին մասնակցում են դպրոցի բոլոր ծնողները:

2.Դասարանական

Այս տեսակի ժողովները կազմակերպում են դասղեկները և քննարկուում են ուսումնադաստիարակչական հարցեր:

3. Անհատական

Անհատական ծնողական ժողովների ընթացքը քննարկում են աշակերտի անհատական հարցեր:Կազմակերպում է դասղեկը,տվյալ առարկայի ուսուցիչը:

Ծնողներին պետք է հրավիրել ոչ միայն այն ժամանակ,երբ աշակերտը խախտել է կարգապահությունը կամ սկսել է վատ սովորել,այլև պարբերաբար՝տվյալ սովորողի

արտադասարանական ընթեցանությունն արդյունավետ կազմակերպելու,նրան հանրօգուտ աշխատանքի մեջ ընդգրկելու,երեխայի ընդունակությունը որևէ բնագավառում զարգացնելու մասին պայմանավորվելու նպատակով:

Անկարգապահ աշակերտների ծնողների հետ հարկավոր է համաձայնության գալ դպրոցականների վրա ներգործելու միասնական պահանջներ և մանկավարժորեն արդարացված միջոցներ կիրառելու մասին:

Պետք է միշտ հեշել, որ առավել արդյունավետ է աշակերտների վրա ներգործման խելացի միջոցների մասին հանգիստ,գործարար զրույցը ծնողների հետ,քան հանդիմանությունները և բողոքները նրա հասցեին:

Ծնողական ժողովները պետք է լինեն լավ նախապատրաստված և անցկացվեն հմտորեն,որպեսզի օգնեն ծնողներին,որ նրանք արդյունավետ կազմակերպեն երեխաների դաստիարակությունը:

Ծնողական ժողովների նախապատրաստման ընթացքում պետք է հաշվի առնել հետևյալ հանգամանքները:Դրանք են՝

1.Թեման լինի հրատապ և հետաքրքիր

2.Ժողովները անցկացնել ծնողների համար հարմար ժամին

3.Ժողովը պետք է սկսեն լավ տրամադրությամբ և չպետք է տևի մեկուկես ժամից ավելի

4.Նախ պետք է խոսել դրական հարցերի շուրջ,ապա անցնել խնդիրների քննարկմանը

5.Ծնողների և դասղեկի շփումը պետք է լինի անմիջական

6.Խոսել,որ << վատ >> աշակերտ չի նշանակում վատ մարդ

7.Ծնողը պետք է համոզվի,որ դպրոցը պատրաստ է աջակցել իրեն՝օգնելու իր երեխային:

Հարկավոր է, որ դասղեկը չսահմանափակվի միայն առաջադիմության արդյունքների և կարգապահության վիճակի մասին տեղեկություններ տալով:

Կարևոր է՝ծնողներին ծանոթացնել ընտանեկան դաստիարակության փորձին,նրանց օգնել առավել բարդ հարցերում:

Հարկավոր է՝ խուսափենք նախատել ծնողին բոլորի ներկայությամբ նախորդ ժողովին չմասնակցելու համար:Դասղեկը պետք է դրսևորի հետևյալ վարքագիծը.

1.Չհամեմատի մի աշակերտին մյուսի հետ

2.Բացասական գնահատական չտալ ողջ դասարանին

3.Չգերագնահատել որևէ առարկայի դերը

4.Չխոսել ծնողի հետ բարձր , հրամայական տոնով

5.Լինի բարյացակամ և ունենա մանկավարժական տակտի մեծ զգացում

6.Երբևէ դասարանական ժողովի ժամանակ անհատապես չխոսել որևէ երեխայի մասին,եթե անգամ ծնողը խնդրում է :

Ինչպես ասացինք ծնողական ժողովները պետք է լինեն լավ նախապատրասված:Ծնողական ժողովների անցկացման երեք փուլերն են՝

I. Փուլ- նախապատրաստում

- ✓ Ծնողական ժողովի նպատակի ընտրություն
- ✓ Աշակերտների առաջադիմության թերթիկների նախապատրաստում
- ✓ Իրազեկում

II. Փուլ-Անցկացում

- ✓ Դասարանի աշակերտների առաջադիմության վերլուծություն
- ✓ Դասարանի սոցիալհոգեբանական մթնոլորտի ներկայացում
- ✓ Հոգեբանամանկավարժական խորհրդատվություն
- ✓ Կազմակերպչական աշխատանքների քննարկում
- ✓ Անհատական զրույց ծնողների հետ

III. Փուլ-Արդյունքի ամփոփում

- ✓ Կատարել եզրակացություններ
- ✓ Կայացնել որոշումներ
- ✓ Կարևոր է,որ մանկավարժորեն ճիշտ կազմակերպված ծնողական ժողովից ծնողները պետք է գնան հավատով լցված դեպի իրենց երեխան:

Ծնողական ժողովի արդյունքը պետք է լինի այն ,որ ծնողները դառնան ավելի վստահ այն բանում,որ իրենց երեխաների դաստիարակության հարցում կարող են հենվել դասղեկի և մյուս ուսուցիչների աջակցության վրա:

Եզրակացություն

Այսպիսով՝բավականին պատասխանատու գործընթաց է ուսուցչի,սովորողի,ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի համագործակցությունը:

- ✓ Ուսուցիչը շատ կարևոր դեր ունի սովորողների կրթության և դաստիարակության գործընթացում դպրոց-ծնող հարաբերություններ հաստատելու առումով:
- ✓ Ընտանիքի և դպրոցի փոխներգործունեության ձևերը հնարավորություն են տալիս կողմերին առողջ հարաբերություններ ստեղծել՝ունենալով ընդհանուր նպատակներ:

Ուսուցչի համագործակցությունը սովորողի ծնողի հետ կարող է լուծել կրթական մի շարք հիմնախնդիրներ:

Ուսուցիչը սովորողի ծնողի համար պետք է ապահովի մանկավարժական խորհրդատվություն:

Ուսուցիչն ու սովորողի ծնողը պարտավոր են միմյանց տեղյակ պահել սովորողի խնդիրների մասին և համատեղ փորձեն ելքեր գտնել:

Ուսուցիչն ու սովորողի ծնողը պետք է հարգեն միմյանց,լինեն հանդուրժող ու արդարամիտ:

Ուսուցիչը պետք է իրականացնի ծնողական ժողովներ՝նպատակ ունենալով քննարկել առկա խնդիրները:

Ուսուցիչը ծնողների հետ համագործակցության հարցում պետք է միասնական մոտեցումներ ցուցաբերի՝ ի շահ սովորողի կրթության ու դաստիարակության:

Ամփոփում

Երկարատև աշխատանքի ընթացում ես կուտակել եմ կանոնների ու սկզբունքների մի ամբողջ շարք:

Իմ պրակտիկայից ծնված սկզբունքներն են.

1. Հարգանք երեխայի անձի նկատմամբ:Երեխաները դա լավ են զգում:
2. Ծնողը իմ հուսալի ընկերն ու օգնականն է:
3. Արդյունքի հասնել միայն ուսուցիչ-ծնող-աշակերտ համատեղ գործունեությամբ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Յու.Ա.Ամիրջանյան,Ա.Ս.Սահակյան,Մանկավարժություն ,Երևան2004.:
2. Ամսագիր << Ընտանիք և դպրոց >> 5.2013.:
3. Ջ.Գյուլամիրյան ,Երկխոսություն ծնողների հետ, Երևան 2002.:
4. Ա.Ա.Մակարենկո, Ընտանեկան դաստիարակության մասին,Երևան 1985.: